Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	ԲԵՌԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Աթոյան Նուշիկ Կարապետի Աստվածաբան 093943377 nush010183@gmail.com ՀԵՊ, պատմություն 5-12-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Ղ. Ալիշանի անվան թիվ 95 միջն.դպրոց 476041 dproc-95@mail.ru https://m.facebook.com/profile.php?id=100035399540878

Բովանդակություն

Տիտղոսաթերթ 1
Ներածություն 3
Հիմնական բովանդակություն 6
Եզրակացություններ, առաջարկություններ 11
Դասի պլան 12
Օգտագործված գրականության ցանկ 13
Հավելվածներ 14

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Ինչպե՞ս Բեռլինի վեհաժողովը և Հայաստանը թեմայի ուսուցումը կազմակերպել սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լրացնել միայն սովորողների մասնակցությամբ հետազոտությունների պարագայում
Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Ղ. Ալիշանի անվան թիվ 95 միջն. դպրոցի 8-րդ Ա դասարան 25 աշակերտ՝ 13 աղջիկ, 12 տղա
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտությունն իրականացրել եմ Էդուարդ Դը Բոնոյի «Մտածելու 6 գլխարկներ» մեթոդի միջոցով: Նախապես դասարանը բաժանել 6 խմբերի՝ վիճակահանության միջոցով • Սպիտակ գլխարկ – փաստեր և տեղեկատվություն • Սև գլխարկ – թաքնված սպառնալիքներ, հնարավոր ռիսկեր և հոռետեսություն • Կարմիր գլխարկ – զգացմունքներ, բարկություն և ներքին լարվածություն • Դեղին գլխարկ – առաջարկներ և լուծումներ • Կապույտ գլխարկ – գնահատել բոլոր խմբերի առաջարկները և գտնել օպտիմալ լուծում • Կանաչ գլխարկ – այլընտրանքներ և փոփոխություններ

«Սպիտակ գլխարկ» թիմը ներկայացնում է Բեռլինի վեհաժողովի վերաբերյալ տեղեկություններ և փաստեր.

- 1878 թ. Հունիսի 1-ից Հուլիսի մեկը ընթանում է Բեռլինի վեհաժողովը, որին մասնակցում էին մեծ տերությունների ներկայացուցիչները, որտեղ որոշվեց Հայկական հարցը՝ առանց հայերի և հայկական պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել վեհաժողովին:

«Սև գլխարկ» թիմը ներկայացնում է այն վատատեսական իրողությունները, որոնք տեղի ունեցան Բեռլինի վեհաժողովի ընթացքում և դրանից հետո: Օր.՝

- Պատվիրակության անդամներին մեծ տերությունների ներկայացուցիչները թույլ չեն տալիս մասնակցել վեհաժողովին
- Այսպիսով Հայկական հարցը վճռվում է առանց հայերի մասնակցության
- Հայաստանի ինքնորոշման իրավունքը լիովին մերժվում է
- Պայմանագրի 61-րդ հոդվածը չարաբաստիկ էր հայերի համար, որտեղ չկար Հայաստան բառը

«Կարմիր գլխարկ» թիմը ներկայացնում է այն զգացմունքներն ու բարկությունը, որ պատվիրակությունն ունեցավ Բեռլինում.

- Խրիմյան հայրիկը վեհաժողովը նմանեցրեց հարիսայի ճաշկերույթի, որին երկաթե շերեփներով ներկայացած մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը, իսկ ինքը ուներ միայն թղթե շերեփ, որը մնաց հարիսայի մեջ:

«Դեղին գլխարկ» թիմը Սան-Ստեֆանոյի կոնֆերանսից ոգևորված առաջարկեց այլընտրանքներ և փոփոխություններ, ներկայացրեց այդ նախագիծը Ալեքսանդր 2-րդ ցարին: Այն բաղկացած էր 6 կետից՝

- Արևմտյան հայաստանում նշանակվելու էր հայ կառավարիչ, որին նշանակելու էր սուլթանը Ռուսաստանի ահավանությամբ

	• Հայերը վերահսկելու էին երկրի պահպանումը • Դատարանները գործելու էին քրիստոնյաների օրենքներով • Վերացվելու էին քրդերի արտոնությունները • Կատարվելու էր հարկերի արդար բաշխում • Հայ պատգամավորները հաստատվելու էին Բարձր Դռան կողմից **«Կապույտ գլխարկ»** թիմը լսելով բոլոր թիմերի կարծիքները առաջ է քաշում այն հիմնական միտքը, որ հայ ժողովուրդը հույսը պետք է դնի սեփական ուժերի վրա: Խոշոր տերությունները վեհաժողովի ընթացքում ունեին իրենց շահերը Օսմանյան Թուրքիայից: Սուլթանական կառավարությունն օտար երկրների միջամտություններից ազատվելու համար նախընտրեց Հայկական հարցի լուծման ուրույն ուղի՝ հայերին ցեղասպանելու քաղաքականությունը: **«Կանաչ գլխարկ»** թիմը լսելով բոլոր թիմեր կարծիքները առաջ է քաշում այն տեսակետը, որը Խրիմյան Հայրիկը առաջարկում էր վեհաժողովից հետո. • «Ձեր բարեկամաց և ազգականաց իբր պարգև մէկ-մէկ զէ՛նք տարեք, զէ՛նք առեք և դարձեալ զէ՛նք: Ժողովու՛րդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրա՛յ դիր, քո խելքի՛ն և բազկի՛ն ոյժ տուր»:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	1 շաբաթ

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Հետազոտության ընթացքը

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

1878 թ. փետրվարի 19-ի Սան-Ստեֆանոյի կոնֆերանսից ոգևորված 1878 թ. մարտի 15-ին արևմտահայ գործիչները Ալեքսանդր II-ին ներկայացրին Հայաստանի ինքնավարության նոր նախագիծ: Այն նախատեսում էր.

1. Հայաստանում նշանակվելու էր հայ լուսավորչական ընդհանուր կառավարիչ, որը կոչվելու էր մարզպան և վալի, ունենալու էր մյուշիրի աստիճան: Նրան նշանակելու էր սուլթանը՝ Ռուսաստանի կայսեր հավանությամբ:
2. Հայաստանի կուսակալներն ու գավառապետերը լինելու էին լուսավորչական, ընտրվելու էին Հայաստանի Երեսփոխանական ժողովի և հաստատվելու Բ. Դռան կողմից:
3. Հայերն էին վերահսկելու երկրում կարգի պահպանումը, և ոստիկանությունը կազմվելու էր հայերից:
4. Դատարանները գործելու էին քրիստոնյաների օրենքներով՝ հայ դատավորների նախագահությամբ: Ղադիները և կրոնական այլ պաշտոնյաներ մասնակցություն չէին ունենալու դատարանների աշխատանքին:
5. Վերացվելու էին քրդերի, չորբաջիների, դերեբեյների արտոնությունները:
6. Հարկերի նոր և արդար բաշխում էր կատարվելու:

Վակֆի (հոգևոր հաստատությունների կալվածքներ) բարեկարգում, կալվածական ու հողային հարցերի վերանայում էր կատարվելու:

Հայկական հարցը Բեռլինում ներկայացնելու համար կազմավորվեց Ազգային պատվիրակություն: Այն գլխավորելու էր Տարոնի արքեպիսկոպոս և Կ. Պոլսի նախկին պատրիարք Մկրտիչ Խրիմյանը: Նա չէր տիրապետում որևէ եվրոպական լեզվի, չէր փայլում դիվանագիտական տաղանդով, սակայն որպես հայրենասեր ու ազնիվ գործիչ,

չափազանց մեծ հեղինակություն ուներ արևմտահայերի մեջ:

Թուրքական իշխանությունները տեղյակ էին Մ. Խրիմյանի պատվիրակության մեկնմանը և իրենց համաձայնությունն էին տվել, որ Հայկական հարցը բարձրացվի Բեռլինի կոնֆերանսում: Թուրքական կողմը գիտակցում էր, որ Սան Ստեֆանոյի պայմանագիրը, եթե նույնությամբ մնար, ապա Ռուսաստանը կստանար իրական հնարավորություն՝ ամրապնդվելու Արևմտյան Հայաստանում և նույնիսկ զորքերն այնտեղ մշտապես պահելու պատրվակ: Դա թուրքական կողմի համար նշանակում էր արևմտահայկական տարածքների կորուստ: Այս հանգամանքով էր պայմանավորված, որ սուլթանական իշխանություններն ոչ միայն չէին խոչընդոտել, այլ նույնիսկ խրախուսել էին պատրիարքարանին՝ պատվիրակություն ուղարկելու Բեռլին:
Պատվիրակությանը պետք է Բեռլինում միանար Խորեն արքեպիսկոպոս Նարբեյը, որը դիվանագիտական հանձնարարությամբ մեկնեց Պետերբուրգ: Նա խելացի էր, պերճախոս, ինչ-որ տեղ դիվանագետ, համարձակ: Շատ դեպքերում նրա համարձակությունն ու դիվանագիտական տաղանդն օգնել էին սուլթանի մոտ պաշտպանելու հայ համայնքի իրավունքները: Սակայն այս գործիչը թուլություն ուներ արտաքին փայլի, շքանշանների ու տիտղոսների նկատմամբ: Մ. Օրմանյանը նրա մասին գրում է. «ՆարՊէյի կեանքը առեղծուածային ըլլալու չափ յուրօրինակ զուգորդութիւն մըն է մտքի ու գործի, լեզուի ու գրողի գերազանցապէս ընտիր ձիրքերու հետ խառնուած թեթեւութեանց եւ անտեղութեանց եւ ստորնութեանց»[2]:
Պատվիրակության թարգմանիչն ու քարտուղարն էր Մինաս Չերազը: Նա հետագայում աչքի ընկավ որպես գրող, թարգմանիչ, խմբագիր և հասարակական գործիչ:

Պատվիրակությանը Բեռլինում միացավ նաև մանկավարժ, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ Ստեփան Փափազյանը: Նրա առջև խնդիր էր դրված վերահսկել երկու արքեպիսկոպոսների գործունեությունը և նրանց պահել պատրիարքին ցանկալի քաղաքական ուղու վրա:

1878 թ. հունիսի 1–ին Բեռլինում սկսված վեհաժողովն ընթանում է Մեծ Բրիտա նիայի մշակած սցենարով:

Մեծ տերությունների ներկայացուցիչները, սակայն, թույլ չեն տալիս հայ պատվիրակներին մասնակցելու վեհաժողովին: Այսպես Հայկական հարցը հատկապես Մեծ Բրիտանիայի քաղաքականության հետևանքով վճռվում է առանց հայերի մասնակցության:

Բեռլինի պայմանագրով Հայկական հարցի լուծման հեռանկարը դառնում է ավելի մշուշապատ ու անիրատեսական: Հայաստանի ինքնավարության ծրագիրը լիովին մերժվում է: Պայմանագրի 61-րդ հոդվածը ևս թուրքական կառավարությանը պարտավորեցնում էր հայերի համար բարեփոխումներ անցկացնել, ապահովել նրանց անվտանգությունը: Բայց բարեփոխումների իրագործման հսկողությունն այժմ, բացի Ռուսաստանից, դրվում էր նաև վեհաժողովի մասնակից մյուս տերությունների վրա: Դա վերջիններիս հնարավորություն էր տալիս միջամտելու Թուրքիայի ներքին գործերին:

Քանի որ Ռուսաստանն իր զորքերն անհապաղ դուրս էր բերելու գրաված տարածքներից, ոչ մի երաշխիք չէր մնում բարեփոխումների կենսագործման համար: Բեռլինի պայմանագրում Հայաստան անունը փոխարինվել էր հայաբնակ մարզեր բառակապակցությամբ: Ալաշկերտն ու Բայազետը, ինչպես խոստացել էր Անգլիան, վերադարձվեցին Օսմանյան կայսրությանը: Ռուսաստանին էր մնում միայն Կարսը՝ շրջակա գավառներով: Կարս բերդաքաղաքը շուտով դարձավ նորաստեղծ Կարսի մարզի կենտրոնը, դրա մեջ մտան Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի գավառները (օկրուգներ): Այն մտցվեց Կովկասի փոխարքայության կազմը՝ որպես առանձին վարչական միավոր: Վեհաժողովի որոշումները խոր հիաս թափություն առաջացրին հայության մեջ: Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը վեհաժողովի վերջին օրը՝ հուլիսի 1–ին, բողոք ներկայացրին մեծ տերություններին: Խրիմյան Հայրիկը վեհաժողովը պատկերավոր ձևով նմանեցրեց հարիսայի Ճաշկերույթի, որին երկաթե շերեփներով ներկայացած մասնակիցները կարողանում էին տանել իրենց բաժինը: Բայց քանի որ ինքը միայն թղթե շերեփ ուներ, այն մնաց հարիսայի մեջ, և ինքը ստիպված էր ձեռնունայն վերադառնալ: Խրիմյանը և բազմաթիվ այլ գործիչներ Բեռլինից հետո հասկացան, որ օտար տերությունների հետ իրենց հույսերը կապելու փոխարեն անհրաժեշտ է կազմակերպել սեփական ժողովրդի զինված ազատագրական պայքարը: Խրիմյան Հայրիկը՝ կոչ է անում հայությանը.

	«Ձեր բարեկամաց և ազգականաց իբր պարգև մէկ-մէկ զէ՛նք տարեք, զէ՛նք առեք և դարձեալ զէ՛նք: Ժողովու՛րդ, ամենէն առաջ քո ազատութեան յոյսը քո վրա՛յ դիր, քո խելքի՛ն և բազկի՛ն ոյժ տուր»»: Մեծ տերությունները բազմիցս հանդես եկան հայկական բարեփոխումներն իրականացնելու պահանջներով՝ նպատակ ունենալով Թուրքիայից զիջումներ կորզելու իրենց օգտին: Սուլթանական կառավարությունն օտար երկրների միջամտություններից ազատվելու համար նախընտրեց Հայկական հարցի լուծման ուրույն ուղի՝ հայերին ցեղասպանելու քաղաքականությունը[3]: Բեռլինի կոնգրեսի արդյունքներից չափազանց դժգոհ հայկական պատրիարքարանը դիմեց ամեն ինչի ,որպեսզի հասնի գոնե հ.61 հոդվածի պահպանմանն ու իրականացմանը:Այդ ջանքերի էական տարրերն ու գործին էին հայ պատրիարքի այցելությունները Եվրոպայի հեղինակավոր դիվանագիտական ներկայացուցիչներին[4]:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ Դը Բոնոյի «Մտածելու 6 գլխարկներ» մեթոդի կիրառումը արդյունավետ է դարձնում նոր նյութի ուսումնասիրությունը, որի օգնությամբ աշակերտները կարողանում են ինքնուրույն վերլուծել, համեմատել և քննադատել հանձնարարված նյութը:
Այլ տեղեկատվություն	

Դասի պլան

Ուսուցչի անուն, ազգանունը	Նուշիկ Աթոյան
Ամիս, ամսաթիվ	15.09.2023
Առարկա	Հայոց պատմություն
Դասարան	8-րդ դասարան
Թեմա	Բեռլինի վեհաժողովը և Հայաստանը թեմայի ուսուցումը
Նպատակներ	Ներկայացնել 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայկական հարցի լուծմանն ուղղված հայ գործիչների ջանքերը:
Վերջնարդյունքներ	Աշակերտները կարողանան բացատրել Հայկական հարցի միջազգայնացման հետևանքները:
Խաչվող հասկացություններ	Պատճառները, հետևանքները, առանձնահատկությունները և ընդհանրությունները դիտարկել՝ որպես պատմական և հասարակական երևույթների ու իրադարձությունների օրինաչափություններ:
Միջառարկայական կապ	Հայոց եկեղեցու պատմություն, Համաշխարհային պատմություն, Աշխարհագրություն, Հայոց լեզու
Ուսումնադիտողական պարագաներ	Դասագիրք, տետր, գրիչ, 6 գույնի գլխարկ և տեսասահիկ
Գնահատում	Կատարել փոխադարձ գնահատում՝ հաշվի առնելով ձեռք բերած գիտելիքները և խմբում ներգրավվածությունը:

Գրականության ցանկ

1. де Боно Э., Шесть шляп мышления, Питер Паблишинг, 1997, 256 с.
2. Օրմանեան Մ., Ազգապատում, հ. Գ, Մայր աթոռ ս. Էջմիածին, 2001,էջ 467
3. Ա. Մելքոնյան, Պ. Չոբանյան, Ա. Սիմոնյան, Ա. Նազարյան, Է. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Հայոց պատմություն 11, Երևան 2015 (էջ 53-54)
4. Նորբերտ Զաուպ,Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914),Երևան 2008,էջ21

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Նկարներ